

4708

Օ Մ Ե Զ

Խ ՀԱՐՈՒՍՁԼ ԿՈՎԱՊԱՇՏ

Ե Ի

ՄԱԽԱԹԻ ԾԱԿՈՒՄ

Ո'րդեն, ենք հարստու-
թեանց Տիայն Տի Եղան է, ծըլ-
սարդառակերպեան համար այն
էլ ջառիչա դուր.

ՀՕՐ ԽՈՐԱԾ



891.99
Ե-71

ԹԻՑԼԻԱ

ԷԼԵԳՐԱՄԱՐՆ ԱՐԱՆԵԱՆՑ ՊՈՒԽ. 7.

1908

19 NOV 2011

891599

C-7171

ԱՎ

ԺՄ ե 2

Հ ՀԱՐՈՒՍՃ ԿՈՒՊԱՆՏ

Ե Հ

ՄԱԽԱԹԻ ԾԱԿՈՒՄ

1001
3130

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՅԱՍՏԱՆԻ

Ուռի, եթե հարստու-
թեակ չկայ Տե եղա է, ճշշ-
տութեակ բնակ համար այս-
էլ ջարդ պար.

ՅՈՐ ԽՐԱՄԸ



ԹԻԳԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴՐԱՄԱ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴՐԱՄԱ

1908

7/11/1922

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴՐԱՄԱ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴՐԱՄԱ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴՐԱՄԱ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴՐԱՄԱ

15.07.2013

48437

ՆԱԽԱԲԱՆ

Ով որ փոքձել է, նա զիտէ թէ իրական կեանքից պատկեր գըողի գըութիւնն ինչ կրակ բան է: Զարդութիւնները, ժողովրդի ցեցերը, պորտաբոյծ անհատներն ամեն ջանք թափում են իրանց կեղաստամարքները, դէմքերը աշխարհից ծածռւկ պահել: Եթէ մէկը համարձակուեց հրամարատի հանել, վայ նրան: Կատաղած ցեցերը սրիկաներ վարձելով աշխատում են նրանից գալ.. աճ.. մահ.. զրպարտութիւն—ամենը պատրաստ են նրա համար:

Երկու տարի առաջ մի քանի պատկերների թըւում մէկը գըել էի Հ հարստի մասին: Յանկարծ իմացայ, որ Հ-ը մարդու անուն է եղել, այն էլ բուրժուածարդու անուն. զրա համար վրիփել է ու երկու խըդամեն, ողորմելի հիւանդների կաշառելով ինձ հայհոյել և մի արդիւնաւոր մանկավարժի զրպարտել, որի եղունգըն աւելի մաքուր է, քան թէ Շունչ-ներով լմեզած Հարուստների ճակատը:

Կաշառուածներին ինչ տաել, որոնք վաղուց ըժ. Օրբելու ապրանք լինելով՝ պատասխանատու չեն իրանց արարքի համար: Իսկ Հ հարստի մասին այս քանը կասեմ. —լինում են հիւանդներ, որ քիթ ու պինչ անելով իրանց օգնող բժիշկներին հայհոյում, խփում են, թէ ինչու նշտարով թարախ հանելիս իրանց ցաւ պատճառեցին: Մեծահոգի բժիշկներն այդպիսի տխմար հիւանդների վրայ նեղանալու փոխարէն շարունակում են կարեկցել ու բժշկութիւնն առաջ տանել: Ապացուցանելու համար, որ մեծահոգութեան մէջ ոչ մի բժշկից ետ մնացողը չեմ, շարունակում եմ ես էլ տխմար Հ հարստին կարեկցել ու հաստ գլուխը մախաթի ծակից ազատել. այնուհետև ինքը զիտէ. ուզում է արքայութիւն ընկնի, ուզում է՝ դժոխի մէջտեղը:

Ճաշակով կահաւորած սեղանատանը ճաշը վաղուց պատրաստ էր, բայց կարմրաթուշ տանտէրը գեռ չէր վերջացրել սխած բանբասանքը իւր կնոշ մասին, որ սովորաբար կրկնում էր զրեթէ ամեն մի հիւրի մօտ Երկու անդամ որդիքը յայտնել էին մօր կողմից, որ հայը պատրաստ է, խոկել էր ու խօսքը շարունակել. Երրորդ անդամ պատաւ գայեակից պատկառելով ակամայ ընդհատեց խօսակցութիւնը և ալեոր բեղերը սրելով դուրս եկաւ դահլիճից և ուռուած նստեց սեղանի զլսին, կնոշ դիմաց համեստ, լոիկ կինը նկատելով, որ մաղձը ամուսնու յոնքերից կաթկաթում է, քիչ լուռ սպասեց, որ հաց կտրեն. յետով զեղեցիկ գէմքին ժպիտ բերելով նայեց դէպի ակնոցաւոր Երիտասարդ հիւրն ու հանդարտ խօսեց.

— Ո՞վ դիտէ սիրելի ամուսինս դարձեալ ինձ վրայ է բարկացած: Իմ կարծիքով չարժէ անցական, չնչին սովորների համար յուզուել, կեանքը դառնացնել: Ամենա էլ այս աշխարհում հիւրեր ենք: Այսօր ողջ ենք, ճաշում ենք սեղանի շուրջը մեր դաւակ-

Ների հետ, վազր կարող է մի գործանք պատահել դրա կամ ինձ հետ:

Այս ասելուց ետ մեղմով դիմեց ամուսնուն. «ամենից լաւն է, սիրելիս, հանդիստ սրաով ճաշես ու Աստծուն փառք տաս»:

Հարուստ մարգու կատաղելուն մի այդպէս մահանայ էր պահաս, սկսեց այնպէս կոպտաբար զօռալ կնոջ վրայ, այնպէս ամուր, որ նստած երեխաները սարսեցին.

— Ես եմ ու փառք չեմ տալիս Աստծուն, քու քարոզները քեզ համար պահիր, ինձ չես կարող քու Աստծուն պաշտել տար. Քեզ ասել եմ հարիւր անգամ ու այժմ էլ վերջին անգամ կրկնում եմ առանց քաշուելու այս հիւրից.—բաւական էր, հերթ' էր, ձեռ վերցրու ծակ ազգասիրութիւնից: Քաղաքի թողեր թափառելը թռղ, տուն նասի: Խեղճերին օդնութիւն անելք մէկ կինի, երկու կինի, դու չափն անցկացրիր:

Տիկինը դիմակը, որ ամուսինը կոպիտ, կողքը հաստ գիւղացի էր, բայց երբէք չէր երեակացել, որ նոս այնքան գռեկիկ մնացած լինէր, որ հիւրի ներկայութեամբ ազգպէս բղաւէր իւր վրայ: Խոր վիրաւորուած՝ ձեռի հացի պատառը թողեց, աչքերը սփոռցին յառեց և յուզմունքը մի կերպ զսպելով մատերը մերենալաբար ման ածեց նախշերի վրայով: Գոռող, Խ հարուստը նկատելով կնոջ վրդովմունքը, զիւական բաւականութիւն զգաց իւր սրառում. ընդհանուր լոռութեան մէջ շարունակեց մի կողմէց գժգոնալը, միւս կողմէց զալի ախորժակով կերակուր լափելը: Առժամանակից

ետ բռնաւորի ինքնագոհութեամբ հիւրին մեկնելով բաժակը հրամալեց.

— Գինի ածա, աեսնեմ, այսպէս որ սկսել է կինս բարեգործութիւններ անել շուտով զինիս էլ կրկարացնի, որպէսզի իւր «որբերին» խնամելու աւելի միջոց ունենալ:

Որպէս խօսքը լսելիս աիկինն աւելի կարմրեց: Փողասէր ամուսինը քարասրաի պէս կնոջ դէմքին նայերով դրասաց.

— Թէ քեզանում մեղք չկայ, ինչու ես կարմրում, հը: Քու լիմար խեթով բարեգործութիւն է, երբ մարդ արիւն—քրտինքով ժողովածը շան ու գէկի բաժին շինի, ինըը դարսակ մնարով գնայ ուրիշին ձեռ մէկնի: Խեղն հալրս այնքան արեիները քաշ էր տուել, հոգին կատիկն էր թոռել. Ես նրա որդին շան չարչապի քաշելով հաղիւ կոպէկներ եմ իրար զցել, դու չարածի քու բարեգործութիւնով վճռել ես ինձ կործանիմէցի արխի լուսով թողնել: Զէ, լսիր ունել ու զիւղի արխի լուսով թողնել: Զէ, լսիր ուսածս ականջումդ պահիր.—Ես քեզ իրաւունք չեմ տասածս ականջումդ պահիր.—Ես զեղ իրաւունք չեմ տուն, աեղ մտահան անում գաղթալիս, զուր ես տուն, աեղ մտահան անում գաղթական կոօների պատճառովի: Մի քիչ էլ մեղ վրայ կամ կոօների պատճառովի:

Հիւրը շատ անհանոյ դրութեան մէջ էր. մատները քներակին, աչքերը սփոռցին սկսեած լսում էր տանափրոջ թափած նախասինքները ու սրաի մէջ

ափսոսում ազնիւ տիկնոչ, որ վրդովմունքից նստած տեղը գողում էր, Զեռն ամենեին կերակրին չըդիպցրեց: Հարուստը կնոշ լոռութեամբ աւելի կատաղած, կոռուփր սեղանին գարկեց ու գոչեց.

— Իմ տուն քանդողը այն շառլատանն էր, որ քեզ յորդորելով, գովելով բարեգործական ընկերութեան մեջ խառնեց: Դու որ զահրումար վարչութեան անդամ չգառնայիր, այս օյինները չէիր խաղալ զիմիա: Ես նրա Բնչն ասեմ, որ սիրտս հովանայ: Հինդ անդամ տանից դուրս արի, քսան անդամ խայտառակեցի, որ իմ ընտանեկան զործում չըխառնուի, դարձեալ աներեսի պէս եկաւ դամարրդ մտաւ, տարաւ Վեհափառի մօտ:

Հիւրը համբերութիւնից դուրս գալով լոռութիւնը խղեց.

— Ներողութիւն, յարգելի տանտէր, այսուեղ արդէն նշանակում «աւարաւ վեհափառի մօտ». տիկինը երեխայ չէր, որ տանէին. նա ինքը կամեցել է ամենայն հայոց հայրապետի աշն առնել և գնացել է: Զեր լիշած պարոնը չլինէր, նա ինձ հետ կրգնար. ուրեմն ես էլ շառլատան եմ: Վերջապէս Բնչն վատ բան է արել տիկինը, որ գնացել է հայրիկի օրհնութիւնն ստացել: Դրանով ձեղ մեծ ծախսի տակ չի զցել, շատ շատ մի կառքի փող:

Հիւրի կողմից այսպիսի համարծակ առարկութիւն տանտէրն ամենեին չէր սպասում: Գլխակախ, զսպուած ծայնով փնթփնթաց.

— Հա, շատ խէրով մարդն էլ հայրիկը չի. միամիտ կնկանս զլուխը իւզելու համար «հրեշտակ տիկին» անուանել, քաղաքի գաղթականների ցաւն ու հոգեց առա վիզը կապելով տունս քանդել: Քանդուի այն մարդու օրն ու կեսնըր, որ կնկանս խելքից հանել է ու օտարասէր դարձրել:

Տիկինը փոքր խրախուսուած հիւրի արդար նկատողութիւնով, սկսեց բոնաւոր ամուսնու ճակատին հետեւեալն ասել.

— Ի՞նչ լաւ է, որ միւս կանանց նմտն պինասիրութեան ցաւով չեմ բոնուած, որ կերպասեղէնների խանութներում հաղարներդ ծախսեմ: Իրրե ըրիստոնեայ պարտք եմ համարել անտէր հիւրանդներին այցելել: Իմ հագուստի փողը նրանց համար գեղի, կերակրի տալով մխիթարել: Քեզ Բնչն վնաս. Ես չեմ հին շորով մնացողը: Զարմանում եմ, որ ինձ իրախուսելու փոխարէն ամեն բուկէ գառ խօսքերով ուղագում ես միատեղնել: Ինչո՞ւ ես հոգուդ մեղք աւելացնում: Ով է ինձ խելքից հանել: Ես սկզբից հետեւ եմ խղիս թելագրութեան և կարօտեալ անձանց օգնութեան հասել: Ինչո՞ւ ես այդքան հիւրանդից զըդւում. միթէ գու կեանքումդ հիւրանդանալու չես: Այնպէս բան արա, որ Աստծուն գժուար չըդաց. ան-Այնպէս ԲԱՆ ԱՐԱ, ՈՐ ԱՍՏԾՈՒՆ ԳԺՈՒԱՐ ՉԘԴԱՑ. ԱՆ-

է, որ շարունակ արանջում ես: Ոտներիս նեղութիւն առալով հիւանդներին ապցելութեան եմ զնում, այդ էլ խնայումեն: Այնքան ողորմութեան գէմ խօսել ես, որ զաւակներդ այժմ աղքասներին ծաղրում են: Առաջ իրանց ձեռով կերակրում էին պանդուխոներին և միշտ փող էին խնդրում, որ տանեն կիսամերկ աղքասներին տան: Նրանք էլ կրապաշտ են դառել իրանց հօր պէս: Ճերին, աղքատին չեն խղճում: Ահա թէ որքան անհիմն է քու բարկանալը:

—Ի՞նչպէս թէ անհիմն, բզաւեց X հարուսար, երէկ քեզ ասում եմ, զնանք հօրանցդ տուն, գու պատասխանում ես՝ զնալու տեղ ունեմ: Ես չեմ իմանում, որ շատախօս աիկիններդ ժողով ունեք. հայ աշխարհի հոգալ պէտք է քաշէք: Էլ չէք մատնում, թէ կիրկարմատներ էք, մի քիչ քաշուել պէտք իմանաք: Երէկ լիմարի մէկը երեսիս ասում է: «Դու նրա համար ես կնկանդ գէմ, որովհետեւ նախանձդ դաղիս է, որ ամեն տեղ նրա անունն են տաղիս, նրան փառաբանում իբրև բարեգործ կնոշ, իսկ քեզ ոչ ոք քաղաքումս չի նախացում»: Իհարկ է այդ ասողին շան տեղ էլ չդրի, միայն քեզ ասում եմ. —Ժամանակ անժամանակ մանդալը թող, իմ նամուսը չի վերցնում, որ քեզ վրայ խօսում ենք:

—Ահա թէ անիրաւ տղամարդիկդ ինչե՞ր էք լորինում, հառաչեց շանթուածի պէս մեծահողի արկին ու աւելացրեց.

—Լաւ, երբ որ այդպէս անծիս կասկածներ հիմք բռնելով միշտ կուռում ես հետո ու արածիս մէջից

փարձքը հանում, ես ալսօրուանից իմաց կրտամ, որ ազես ժողովի չեմ զնալու. կասեմ որ տկար եմ. թող խեղն գաղթականի օգտին ինչ ուղում են, վճռեն: Դու զիտես, որ երեք ամիս այն արապիկոնցի ընտանիքին խնամել ենք, ոտի կանդնացրել, այժմ ուղում է իւր երկիրը զնալ, նամբածախս է խնդրում ընկերութիւնից: Նրա լինաւանեկան հանգամանքներին անդամների մէջ ծանօթը միայն ես եմ: Քու խղճին եմ հարցնում, հապա չօղնէմ զարգակ բարեխօսելով:

Ալս խօսքերն արտասանելիս աիկնոչ աչքերը արտասուրից փալլեցին: Կնոջ լացը կռապաշտ ամուսնու սրտին ցնծութիւն պատճառեց: Հաւասացած լինելով, որ կինն այսուհետեւ իւր կամքի հակառակ բան չի բռնիլ, սկսեց մեղմով լանգիմանել.

—Ս! կնիկ, խեղճին օդնելլ լաւ է, մէկ անգամ, երկու անգամ, ոչ թէ ամեն օր, ամեն ժամ: Մեզ էլ հանգասութիւն է պէսաք, թէ չէ:

—Էհ, մարդիկի, մարդիկի, հոգու խորքից թառանչ քաշելով երեսը շրջեց աիկինը ու թաշկինակով շտապ ցածաքացրեց աչքերը, որ կերակուր բերող ժառան լացը չընկատի: Կնոջ ախրութիւնը տանտիրոց փողթը չէր, լսկեց ժամիսն երեսին, աչքերը դիմացի լուսամուտին անկամ դիտում էր թէ ով է բակի սանդուխոց պատշգամք բարձրանում: Երկորդ տեսակ կերակրի մատուցարանը հիւրին համեցէր անելով ականչին շշնչաց հեղնօրէն.

—Տէս, կնոջս հոգէօրդիներից մէկը բակոն բարձրացաւ»: Հիւրն ակնոցներն ուղղելով նայեց ու աեսաւ

մի գաղթական պառաւ ցնցոտիների մէջ վայթաթուած:

— Ամենաթունդ քաղցած ժամանակ երբ դրանց տեսնում եմ, ախորժակա վախչում է, խօսեց Խ հարուստը և առաջ քաշեց մի խոշոր կտորը ու զալի պէս մշրեց: Հիւրն աշխարհ նկատեց, որ տանտէրը սուտ է խօսում ախորժակը կորցնելու վերաբերութեածք: Տիկինը տխուր նստած էր. քաղաքավարութեան համար հարցրեց.

— Տիկին, ձեր պատրաստած սեղանից դուք ոչինչ չեք անուշ անում:

— Ես կուշտ եմ, ախորժակ չունեմ, պատասխանեց տիկինը թոյլ ծայնով և տիրութիւնը հիւրի աչքից ծածկելու համար թեքուեց ու կողքին նստած մտադաշ գտտեր կրծքական ուղղեց:

— Բ՛յր, հայրիկ, միւս հողէորդին էլ եկաւ, քարծր դոչեց մեծ որդին քրքչալով, երբ պատաշդամբի ծալրին երեաց մի երիտասարդ զաղթական, վրէն կրելով եւրոպական ու ասիսկան հազուաների բոլոր նմուշները:

— Զէ, որդի, րիսկալով պատասխանեց շատակեր հայրը, նա հիւնանդանոցի վերակացուն է, հողէորդիների ստհապանը:

Տղայի ալդ անփայել, տնտրդ ծաղրն աւելի վիրաւորեց մօր քնքոյշ սիրար. աչքերն որդու վրաց խեթելով առեց.

— Ամօթ քեզ, հայ գիմնագիստ, դու էիր մնացել, որ տնից տեղից զրկուած արարածներին ծաղրի ա-

ուրկայ դարձնես: Հօրիցդ գրանից աւելի հօրան չես սովորիլ:

Որդին նկատեց, որ հայրն այս անդամ լռել է, իւր արարթը չի խրախուսում, հիւրն էլ աչքերն իրաւնից չի հեռացնում, վերջապէս զգաց իւր վարժունքը նից չի հեռացնում, կարձրեց ու զլուխը կախ զցեց: Տիւգեղութիւնը, կարձրեց ու զլուխը կախ զցեց: Տիւգեղութիւնը, կարձրեց ու զլուխը կախ զցեց:

Տանտէրը զբաղուած էր անլուդ թափանը լցնելով. համեղ խորովածի կտորների վրայ քելալէ զինին լով. համեղ խորովածի կտորների վրայ քելալէ զինին լով. ամեղ խորովածի կտորների խօսելու: Ճաշը վերջակոնծեց ու պատրաստուեց խօսելու:

— Տես, տես, ուր է գնում ափինը, քմծիծալ տալով Խ հարուստը կոնսվ բոթեց հիւրին և վերալով Խ հարուստը կոնսվ բոթեց հիւրին և վերալով կացաւ տեղից, որ եաւելից գնաց խոհանոցը ու զուրս քշի բոլորին: Ամանների պահարանի առաջ իրար կողքի քշի բոլորին: Ամանների պահարանի առաջ իրար կողքի քշի բոլորին:

— Էլ տեղ չկայ, որ խնդրապիներավ, նումակներով լիք չինեն: Եթէ այսպէս իմանայի, մի իոն բաժինք բերեր, այս կնկայ հետ չէ պատկաւի: Եջիւեմ, ուր փախչեմ սրտ ձեռից:

Այսպէս փնթինթալով նայեց իւր եաւել. որդիւր չկային, գնացել էին վերև իրանց սենեակը պարա-

սղելու, միայնակ հիւրն էր ֆնացել սեղանատանք, նա էլ սպասում էր տիկնոջ երևալուն, որ շնորհակալութիւն անի ու գնոյ: Տաճակը նրան ձեռով անելով տոեց.

— Տիկինն այնտեղ զրադուած է, գու այստեղ նայիր, տես, իմ տնաքանդ կնիկն ինչե՛րով է խելքը տանել տուել:

Թղթերի կոյար ցոյց տալով նրանցից մէկը վերցրէց ու չար նախանձից դրդուած մեկնեց հիւրին.

— Նրա հոգե՛որդիներից մէկը զրելիս կլինի, կարդա մի լսեմ: Անպատճառ փող ուղելիս կլինեն: Այս երկու տարին համարեա թէ դադարկուեցի իմ կնկայ միջոցով: Հայրիկի ոսր կոսրէր, կաթողիկոս չըգար և պատճառ դառնար այսքան գտղթականներին մեր կողմբ դարու: Ուղիղ փորձանքի մէջ գցեց: Սուլթանի վիզն էլ այնտեղ փթի, որ թափառական արեց կոօ հայերին:

Հիւրը համեստութեամբ հրաժարուեց մօտենալ ուրիշի ծրարներին:

Հարուսար վիրաւորուած ալդ բանից, ինքը հանեց նամակը ծրարից ու մեկնեց.

— Կնիկն իմնէ, ես իրաւունք եմ տալիս, կարդա: Եթէ պարզ զրտած լինէր, ես կը կարգայի:

Հիւրն ակածայ ընդունեց թերթը և կարդաց հետևեալը. «1897 թ. մայիսի 19, Թիֆլիս.»

Բարեկալաշառնի և բարեխնամող արկին...

Տան տիրոջ սիրար չըտարաւ այս խօսքերը. նրան

բնդկատելով փնթփընթաց. «Ի՞նարկէ, տունս որ քանդի, բարեկալաշառնի կը դառնայ»:

Այդ տակլով տատամփորիչը բերանը կոխեց, իսկ հիւրը շարունակեց հետևեալը. «Մեր դրութիւնը թշուառ թափառականութիւնն է. Եթէ դուք տաճանոյ զնալու լինէք, մեղ բարերարող, տառապանքուանու ազատող ովկ պիտի լինի: Ինձ համար բարեներից ազատող ովկ պիտի լինի: Ինձ համար բարեգործական ընկերութիւնից լուս չըկայ. իմ չոյս դուք գործական ընկերութիւնից լուս չըկայ. իմ չոյս դուք էք. հշմարիտ հաւատացնեմ մեր կեանքը նորէն մեղ բաշխեցիք, դուք էք մեր բարերարը...»

Գէորգ Նորհատեանց»:

— Օ՛հ, մեծ բան է, բացականչեց մաքուր ածիլուած տաճակը, որ մի ցնդուստ նորհատեանց իմ կրնականն ատում է՝ «Ճշմարիտ հաւատացնեմ, կեանքս կանն ատում է» և անդամական բաշխեցիք»: Տեսէք, այս խնդրի մէջ ինչ հն նորէն բաշխեցիք»: Տեսէք, այս խնդրի մէջ ինչ հն անուանում կնկանս, ատումները կրնակով մի այլ նամակում կնկանս, ատումները կրնակով մի այլ նամակ մեկնեց հիւրին: Սա արդէն պարզ նկատում էր ատամակրոջ չարախնդացութիւնն ու նախանձը կեր ատամակրոջ չարախնդացութիւնն ու նախանձը դէսլի կինը: Մի կերպ զապելով իւր արհամարանքը դէսլի կինը կողքի հրէշ հարուսար, կարդաց ձեռի թերգէսլի իւր կողքի հրէշ հարուսար, կարդաց ձեռի թերգէսլի իւր, «1897 թ. մարտի 27 Թիֆլիս

Վակեմաշուր տիկին

Նախ խորին երախսաղիտութիւն կը լայտնեմ ծեղ, որ վեց ամիս է ի վեր մեղ մական զթով մեղ, որ վեց ամիս է ի վեր մեղ մական զթով մեղ, կեանքի պայքարն էր, որ մեղ մեղ գեխնամեցիք: Կեանքի պայքարն էր, որ մեղ մեղ գեխնամեցիք: Կեանքի պայքարն էր, որ մեղ մեղ պիտի անտանելի ճզնաժամ, բայց Աստուած մեղ պիտի անտանելի ճզնաժամ, բայց Աստուած մեղ պական լուծից փախչողը անկարող էր իր հողին աղա-

տեղ, բայց մենք ծեր շնորհիւ ազատուեցինք: Մաղթեմ առ Աստուած, որ նա ծեղ հատուցանէ, որովհետև մեղ համար անկարելի է ծեր արածը փոխարինել...

Մնամ միշտ երախտապարտ Մարգար Հիւսեանց»:

— Օհ, ծաղրեց տանտէրը, եթէ դա երախտապարտ չըմնար, աղուաւները սե կը հազնէին:

Սկզ ասելով երրորդ թերթը մեկնեց հիւրին, որ ծածուկ ուրախութեամբ ընդունելով կարդաց հետեւալը: «Ամենասիրելի տիկին,

Ուրդ, ծեռքդ կրապանեմ. իմ Աստուած դու ես. իմ երեք երեխաս քու ոտքին տակ զուրբան կանեմ: Տիւանդանոցի վերակացու Գրիգոր ասում է՝ մինչեւ տիկինէն տոմսակ չըգալ, հաց չեմ տար: Այս իրիկուն հաց չըկար, որ երեխաներուն տալի, սկսեցին լալ: Կաղաչեմ, տիկին, ինձ պէս խեղճին մի կորցնէք. այս թուղթ բերողին տոմսակ տաք, որ Գրիգորը երեխաներուն հաց տար: Աստուած քեզ երկար կեանք պարգևի, որ մեղ պէս խեղճերին նայում ես:

Մալան Ալստեանց»:

— Դրանց բերանով պէտք է Աստուած երկար կեանք պարգևի, հա՛, հա՛, հա՛, հեզնօրէն ժիժաղեց տանտէրն ու այլ թերթ մեկնեց հիւրին, տուանց նրկատելու, որ սա կարգացածներից հոգու մէջ ցնծում էր: Մատացած թղթի վրայ վստահ ծախով կարդաց.

«1897 թ. մարտի 13, Թիֆլիս,

Մեծապատիւ տիկին!»

Տանկաստանից եկած դաղթական եմ. արախ-

տինում կը ընանամ, ոչ գործ ունիմ, ոչ աշխատանք, աւուր հացի կարօտ եմ. աստեղ ութ աբասի տալիք ունիմ. սրա համար արդելուած եմ տրախտինում: Ի սէր Գրիսասին, ի սէր աղդասիրութեան, ինչ որ ծեր խիղճ կը վերցնի, տուէք: Օրական հացի փող չունիմ, անօթի կանցունեմ. ճարահաստեալ մնացեր եմ...

Կարապէտ Պիտիկեանց»:

Կռապաշտ ասանտէրը բորբոքուելով բացականչեց. «Եղբայր, աշխարհի անօթիներին թաղաւորը չի կարաղանում կշտացնել, կնիկս հայ աղդի անօթիները վիզն է կալել: Այսպէս, յաւ կլինի, որ ես ընկել եմ: Նրա բունած համբէն վերջն ինձ անօթի է դարձնելու»:

Առաջը թափուած թղթերից մինը վերցնելով մեկնեց, «ահա, քանի որ տնաքանդ կնիկս խոհանոցում կռօների հետ քաղցը զրոյցի վրայ է, առ այս էլ կարգա, տեսնենք ինչ լիմարութիւն է պարունակում»: Առանձին արհամարանքով շեշտեց կրօներ խօսքը: Երիտասարդն ակնոցներն ուղղելով կարդաց հետեւալը

«Թիֆլիս. 11 մարտի. 1897 թ.

Համեստափայլ պարոն օրիորդ»:

— Սպասիր, սպասիր, ընդհատեց տանտէրը զայրացած, իմ կնիկը 5-6 զաւակ է բերել ինչպէս թէ օրիորդ, ինչե՛ր է դուրս տալիս ախմախ հոսոսը: Բաւական չէ օրիորդ ասելը՝ պարոնն էլ վրէն կրացնում է: Արի ու այդպիսի կոպիտաների վորո վարդութագութեան պահպատճեալ 7/1. 1922



նակեմ, տեսէք ինչ կայ. «Գթառաւաս մոյր, նոյն օրը, հիւանդանոցէն վերագրարձայ տուն, կրփութամ յալունել խնդակցութիւնս, որ ինձ նման շատ գաղթական հայ եղբայրներ ծեր հոգսերի շնորհիւ այն սրբավայր լորի ներքեւ կը բժշկուեն ու կրծխիթարուեն։ Մեղ համար անուրանալի է ծեր բարերարութիւնը ապագան պիտի խօսի այդ առթիւ։ Բժշկի տուած նարով կապրեմ սենեակիս մեջ, յուսամ օր առաջ առողջութիւն ստանում և ծեր միջոցով կարտղանամ գործ ունենալ և այն արդիւնքով մեր օրապահիկը հայթայթել, կը խնդրեմ մայրական ծեռքիդ հովանին ի սփոփանս վարանեալ սրախ։

Սրդիւնաշատ կեանքիդ երկար օրեր մաղթելով մնամ միշտ որդիական յարդանօր Մամիկոն Մամիկոնեանց։

— Բաւական չէ, որ հոգս է տանում առողջութեան համար, գժողոհաց հարուստը, կնիկս դրոծ էլ պէտքէ նարի նրա համար։ Ավասս, մոռացել է որ թատրօն դնալու. էլ փող ուղիւ... Ա՞հ. մուֆատ խոռում կռօներ, ծեր դէսն ուզարկողի... հայնոյեց տանտերը ու զզուական արտայացառութեամբ միւս խնդրագիրները շարտեց պահարանից ներքեւ. «Գէ՛ արի ու հանդիսա մետ կամ կերածդ հալալ մարսիր... զլուսս մութաքին դնեմ թէ չէ, պատշգամբը լցուելու են կեղասա գաղթականներով ու մուրտառեն։ Երանի իմ աչքին. անդիսական հաշակով տունս նրանց համար եմ շինել։ Եւ այս բոլոր անարանգութիւնը կնիկս տնումէ նրա համար, որ Վեհափառը նրան ասել է, ագու իմ որ-

քերի հրեշտակն ես»։ Ճա՛, հրեշտակ ցոյց կը աւամ նրան, խօսեց Խ հարուստն ատամները կրնաելով. «Հէ՛, այսօրուանից թարկ կրասամ նաշից ես քնելը. կնիկս ինձ որ զարթուն տեսնի, չի համարձակուիլ ամեն մի քոռ ու քաչալի խոհանոցում նստացնել, կը շապացնել։ Թող այսուհետեւ ուրիշները հոգան դժուածների համար, Բաւական էր, ինչ որ կնիկս ինձ էշ շինելով վրէս նստեց։ Կարական վճիռս է. վաղուանից գաղթականի ուս չի լինելու պատշգամբիս վրայ. Եթէ տեսնեմ մէկին վերև բարձրացած. գլխի վրայ ներքեւ եմ զլորելու։

Ազդ ժամանակ հիւրը չկար, անսկատելի կերպով ծկուել էր։ Կուակաշար վազեց գանիին ու կասազի յարձակումով ձեռար մեկնեց պատին կախած համեստ շրջանակով լուսանկար պատկերին, ուժով պոկելով յատակին խփեց.

— Ի՞նչ հարկաւորէ, որ այս գշլասամների պատկերը բերել, այս զարդարուն պատին քաշ է արել։ Վազն և եթ պէտքէ կրակը ցցել։

Գաղաղած, ավարթնամ տանտերն ուզում էր ծախ գոնով իւր կարինէտը դնալ, գանիինի գուռոր մեզօք բացուեց ու աղքատների կարեկից ափինը անակրնկալ ներս մտաւ։ Ամուսնու հերառած գէմքից վախենալով ծախն չը հանեց, այլ անսահման վիշար սրբառում ճնշելով անմռունչ թեքուեց, շպրտառած համեստ պատկերը վերցրեց, կպցրեց շրթունքներին։ Պատուական հոգին և համրուրում էր և հեկեկալով շշնչում.

— Ներիր, Հայրիկ զան, ներիր։ Մի՛ վշտանար, ամուսինս ինքն էլ չի հասկանում, թէ ի՞նչ է անում։
X Հարուստը մրժմրժացնելով թրխացրեց դուռը ու ծտաւ իւր կաբինէտը։

Եքեղ դահինում մի քանի խոշոր, թաճկագին իւղաներկ պատկերներ կային կախած, սակայն տիկնոջ ամենանուիրական փայփայանքների առարկան այդ հասարակ լուսանկարն էր։ Ահա թէ ինչու։ 1896 թ.
Հայրիկն անվերջ զովասանքներ լսելով բոլորից «մի հրեշտակ տիկնոց» մասին, որ անձնուեր կերպով խնամում է Թիֆլիսի հիւանդ գաղթականներին, մի ուսուցչի միջոցով կտնչել էր ու օրհնելով հիացել զործունեայ՝ համեստ տիկնոջ վրայ։ Կամեցել էր համապատասխան ընծայով ուրախացնել իւր աղնիւ դստեր դժուար սիրոր, բայց չէր իմացել ի՞նչ նուիրէ։ Շատ վերուդիր անեւ լուց ետ վեհը յանկարծ լիւել էր, որ ս. Էջմիածնում երկու խումբ գաղթականներ են լուսակարուած։

— Ահա, ամենէն յարմար ընծան, բացականչել էր Հայրիկը, իմ անուերունչ զաւակներին սիրողին, ինամողին թող այս լիշտառակը լինի, սրանից թաճկագին ընծայ հայոց Հայրիկը չունի։

Պատկերի տակ իւր սեպհական ձեռքը դնելով ուզարկել էր տիկնոջ տուն։

Սիր նուիրական պատկերն էր ահա, որ յատակից վերցնելով իւր չերմ արտասուքներով թրչում էր «հրեշտակ տիկինը» և կուսապաշտ ամուսնու անարդ փարմունքի առթով Հայրիկի ներողութիւնը խնդրում։

X ՀԱՐՈՒՍԸ ՄԱԽԱԹԻ ԾԱԿՈՒՄ

Այս կորմրաթուշ հաստափորը Մանչեստրում գործակատար եղած ժամանակից սիրոհարուել էր պլումպուրէնզի վրայ, շատակերութեան ախտի պատճառով եկաւ փորահարինք ընկաւ։ Չեմ ասում թէ այնքան բարակեց, որ մախաթի ծակով անցկացաւ, չէ, այլ անքալով վրչալով այդ հին մեղաւորը այնպէս նեղն ընկաւ, որ մի ոսր գրեց «Էն կեանքումը»։

Զարմոնք է, ինչու շատ անգամ խոր մարդկերանց հրեշտակի պէս կանալք են բաժին ընկնում։ Երկի այդ էլ բաղդի բոռութիւնից։

Նրա ազնուասիրտ կինը, որ տարիներ շարունակ նահասակուել էր փողապաշտ մարդի բնաւորութիւնից, ազքատների օգտին ամեն անգամ փող ուղելիս արիւն—արցունք էր թափել աչքերից, այժմ գրրափ աշխարհը, հանգիստը մուացած ամսից աւելի հիւանդի գլխով պտոյա էր տալիս ու երեխի պէս խրնամում։

Թիֆլիզի հոչակաւոր բարկացկոտ բժիշկն էր նրան այցելում, զրցյա անելով սիրտ տալիս հիւանդին, որ յոյն այս աշխարհից բաղորովին կարել էր Վերջապէս օրի մի օրը էսկուլապի հմուտ աշակերտը

հաստատապէս ասեց հիւանդապահ կնոջը.—Միամիւր կացէք, ափկին, վտանգը համարեա անցել է, հիւանդը շոււր կառողջանայ:

Հ հարուստն այս ուրախ լուրի վրայ հառաջեց. —ա՛խ, պարոն բժիշկ, ուր էր թէ այդպէս լինէք: Օ՛, եթէ ալս նեղ զրութիւնից ազատուեմ, էլ ի՞նչ դարդ ունեմ: Անթիւ գործերս, հաշիւներս ամիսներով մը-նացել են օտարների լուսով, ուտող ուտողի է, քան-դող քանդողի է: Եթէ ես մէկ էլ այս փակ սենետ-կից լցո աշխարհ գուրս գամ, հաւասայնում եմ, ձե-ռովս եկած ոչ մի բարութիւն աղջի համար չեմ խր-նայիլ: Թէպէտ շան օրեր եմ քաշել մինչև երկու շահի եմ վաստակել. խորինիս պղընճները մաքրելով հասել եմ Անդիս, այնտեղից էլ վերագարձել այստեղ, բայց ոչ մի գոհարերութեան առաջ կանգնողը չեմ, միայն թէ ոտի կանգնեմ:

Բարեսիրաբժշկին խիստ դուր եկան այս հիւանդի խօսքերը, ուստի քաղցր դէմքով վրայ բերեց — չէնց ձեր այդ խոստումի պատճառով կաշխատեմ, որ շուտ առողջանաք. Եթէ մինչև օրս չէք արել, գոնէ արտու-հետեւ աղջի ցաւերին օգնէք: Բայց մի բան ասեմ, չը նեղանաք. — վախենում եմ առողջանալուց ետ մոռա-նաք այս խոստումը: Շատ լաւ կրինի, որ սիրա ա-նէք, հասարակութեան օգտին մի լաւ գոհարերու-թիւն անէք ու իբրև բնտիք հայ քրիստոնեայ ար-քայութիւն մտնէք և ոչ թէ Յիսուսի լիշած ջանշալ հարստի նման ասածի վրայ վտշմանէք ու մախաթի ժակում մնաք:

Այս ասելիս բժիշկը քմծիծաղ առւեց: — Հաւատացած եղէք, որ չէ, պարոն բժիշկ, այս նեղ օրից աղատուեմ, տեսէք, ի՞նչպէս փախուե-լու եմ գէպի լաւը: Հէնց առաջինք խոստանում եմ օրէս ետք կնկանս չվշաացնեմ, կոպիտ խօսքով կամ վարձունքով նրա սրախն չփակչեմ. իւր ամսական ոռ-նիկը տամ, ինչ բարեգործութեան վրայ ուզում է, միկը տամ, մինչև օրս արգելում էիք տիկնոջը բարեգործութիւն անել, կարօտեալին օգնել, հարցրեց բժիշկը:

— Ճշմարիտ ասեմ, մի քիչ էլ արգելում էի, պարոն բժիշկ, եթէ տանս իրաւունքը նրա ձեռին պինի, մի ամսից ետ ինձ կրտեսնէք մուրացկան դա-ռած: Աղքատ տեսնելիս ուզում է հազի շորը հանի նրան տայ: — Բարեգործութիւնից էլ սիրուն բան, բացականչեց բժիշկը, անհուն հրճուանքով նայելով հիւ-ւանդի գլխավերել կանգնած ափկնոջը, որ համեստու-թիւնից խնձորի պէս կարմրել էր. — լաւ իմացէք, եթէ որ սիկնը լինէք ձեղ խնամոյը, դուք լցո աշխար-հին ամիս առաջ մնաս բարե տամած, էն կեանքում շքաւորի հանդը զրօննելիս կինէիք: — Պարոն բժիշկ, խնդրում եմ, են կեանքի անունը մի տաք: Թող Աստուած ձեր միջոցով ինձ առողջութիւն տայ, այնպէս բարեգործութիւն անեմ, որ ամեն լսող հայ այնպէս բարեկործութիւն անեմ, կոպիտ ուրախանայ: Իմ հայրենակիցներն անպիտան, կոպիտ ամարդիկ են, իմ ետեկից քոյ Մաղու տղայ էն կան-չամ. բայց մտալրուել եմ ամենից առաջ նրանց լա-ռութիւնով ամաչացնել:

Մի շաբթէն վրայ Խ հարուստն իրան լաւ էր դդում: Հետզհետե ուժի եկաւ ու անկողնից վեր կացաւ. ածելին, սապոնը հանեց, ինքն իւր երեսը թրաշեց, առաջուայ պէս ալեխառն ընչացքները որեց, զպլտուեց ու կալուաճների կառավարութեան զիմին կանդնեց: Ազնիւ բժիշկն իւր աշխատութեան համար համեստ վարձարութիւնով բաւականացաւ, սակայն հպարտ էր նրանով, որ իւր միջոցով մահի նիրանից աղասուած հարուստը աղգին խոշոր նուեր էր տալու, այսինքն հիւանդանոց, գլորոց, օրինակելի արհեստանոց կամ սրանց պէս որեւէ հիմնարկութիւն էր տառ հայ ժողովրդին և բարեգործների շարքը դասուելու:

Այդ յուսով ազնիւ բժիշկն սպասեց բաւական ժամանակ, ձայն զսեց, լրագրների մէջ ևս լուր չրկար, որ նրա միջիօնատէր պացիէնար որեւէ բարեգործութիւն է արել:

Վերջը մի օր բժիշկը պատահմանը տեսաւ նրան ու հարցրեց.—Հր, բարե ձեզ: Սպասելով յօդնեցի, ի՞նչ եղաւ ձեր խոստումը, կատարեցիք թէ չէ:

Խ հարուստը թէպէտ զբաղուած էր նոր հոյակապ շինութեան հոգով, բայց տեսնելով իւր բարերոր խիստ բժշկին, շտապով առաջ եկաւ ու պատասխանեց:

— Հա, ինչպէս չէ, պարոն բժիշկ, խոստումս կատարեցի: Բայց եթէ իմանաք այդ բանի առիթով ես ու կինս ինչքան ընդհարումներ ենք ունեցել... կը զարմանաք: Նա պահանջում էր ինձանից մեծամեծ բաներ, այսինքն որ ես ոստայնանկութեան գործարան

կամ արհեստանոց բայց անեմ հայրենի գիւղումնա, այնտեղի կանանց ու աղջկերանց պարապմունք տամ: Ինչքան բացատրում էի, նա չէր ուզում հասկանալ, որ գտան անազին ծախս ունի: Դուք պատուիրեցիք ինձ Աստծուն մի մատաղ անել, եթէ ինձ լաւութիւն տայ: Աստուած տուեց, փառք իրան: Բայց հաստատիմանալով, որ նա մատաղ անողի սրախն է նայում և ոչ թէ շատ ու քչին, կարգադրեցի, որ մեր գիւղի եկեղեցու դռանը երկու մեծ ոչխար զոհ անեն, լաւ համով եփեն ու աղքատ մարդկերանց բաժանեն: Քահանան, որին նոյնպէս ժամոց էի ուղարկել, պատարագ էր արել հանդէսով ու ինձ համար երկնքից արևշատութիւն խնդրել: Նրա պէս խեղճ քահանայի աղօթքը Աստծու մօտ աւելի լսելի է, քան թէ քաղաքի շոայլ տէրակրներինը: Գիւղի եկեղեցուն, ուր ես մկրտուել եմ, դեռ տապար տարի առաջ մի կարմիր պլիզէ վարագոյր եմ նուիրել առաջուանը սպիտակ հասարակ չիթ էր, անշնորհք բան: Լաւ չեմ արել, պարոն բժիշկ:

Խ հարուստը նկատեց, որ բժիշկը պատասխանելու փոխարէն ուզում է երեսը շուռ տալ, շտապով նրա ձեռը բռնեց և վրայ բերեց.—հայրենի գիւղը, ուր մանկութեանս քաղցը օրերն անց եմ կացըել, ուրիշներից շատ եմ սիրում: Այդ պատճառով բացի ժամին վարագոյր նուիրելը, ուզեցի ուրիշ բարութիւն էլ անել, ամեն նեղութիւն քաշեցի, բայց գիւղի ավերախտ երիտասարդները այդ օգտակար մըրտագրութիւնս մինչև օրս էլ թողնում են անկատար:

Բժիշկը նիշտ է, զայրացած էր, բայց ամեն նիդ
թափելով զագեց այդ զգացմունքը, որ իմանայ թէ
այդ հաստ զլուխը ի՞նչ օդականը բան մտածած կը-
լինի դիւղացոց համար, ուստի հարցրեց.—մատադ տ-
նելուց առանձին ի՞նչ ուշադրութեան արժանի բան
էք մտածել դիւղի հասարակութեան համար, որ ե-
րիտասարդները խանդարել են, ինչումն է նրանց ա-
պերախառնթիւնը:—Ասեմ այս բոպէիս, աեսէք, ան-
կեղծ հայրենասէ՞ր եմ թէ չէ: Մէր դպրոցների փա-
կուեն ու խլուելը ամենի սրտին ցաւ պատճառեցին:
Շատերն սկսեցին պառաւի պէս լաց լինել, բայց
զործ շիներւ համար ոչով մտա մտափ չխփեց: Կնի-
կըս ինձ դիշեր ցերեկ հանդիսա չէր տալիս, մի զլուխ
լիշեցնում էր, որ ես բժշկի մօա խոստացել եմ բա-
րեգործութիւն անել և չեմ սկսում: Նրա ուզածը
բոլորն էլ մեծածախա բաներ էին: Պահանջում պին-
գում էր, այնպէս արժանաւար բան անեմ, որ ժողովրդի
աջին երևայ: Ես չէր լոժարւում նրա ասածին, զրա
պատճառով էի իրար խաթրի զիպանք: Նրա ձեռ-
քից աղատուելու համար որոշեցի մի բարերարութիւն
անել դարձեալ իմ դիւղի ժողովրդին: Դուք էլ դի-
տէք, որ քաղաքի ժողովուրդը շատ հոգացող ունի:—
Յետոյ ի՞նչ արիք, պարոն մեծատուն, շուտ վերջաց-
րեք, շատապում եմ հիւանդի մօտ:—Խնդիր տուի
Կովկասի դպրոցների հոգաբարձուին:—Ինչի՞ համար
երեկ իրաւունք խնդրելու, որ ձեր հաշուով մի դիւ-
ղատնտեսական դպրոց շինէք:—Ո՞չ:—Հապա՞ ի՞նչ,
խնդրի միտքն ի՞նչ էր:—Ես խնդիր էի տալիս, որ

հայ դպրոցների փակ ժամանակ իրաւունք տայ կիւ-
րակնօրեայ դպրոց բաց անեմ, որպէսզի դիւղի երի-
տասարդները զրել կարգալ սովորեն: Ենորհակալ եմ
մեծապատիւ հոգաբարձուից, ինձ բարեկըյս մարդ հա-
նաչելով շուտով թոյլասրեց, իսկոյն նամակ զրեցի
դիւղի գործակալ քահանային, որ իմաց տայ տեղա-
կան դպրոցի ուսուցիչներին:—Որ ի՞նչ:—Որ ես կիւ-
րակնօրեայ դպրոց բանալու իրաւունք եմ ստացել,
խոստանում եմ իմ կողմից տարեկան հարիւր ուռիլի
ծախսել տետրակի, զրբի, զրչի և այլ մանր բաների
համար. Թող նրանք շուտով դիւղի երիտասարդներին,
ինչքան որ կան, ժողովին ու կարգալ, զրել սովորեց-
նեն: Կարծում էի, որ ամենը զնծութիւնից պար կր-
գան, որովհետեւ անձս կառավարութեան առաջ կաս-
կածի ենթարկելով ուզում էի բարեգործութիւն ա-
նել հայ զիւղացոց. բայց տեսէք, ապերախա ուսու-
ցիչներն ի՞նչ են պատասխանում:—մենք չենք կարող
ծրի պարապել. շաբաթուայ մեջ կիւրակին է մեր ա-
զատ օրը, ուզում ենք շունչ առնել:

Ու հրաժարուել են:

Բարկացկոս բժիշկը այլ ևս չկարողացաւ լոելով
վրդովնունքը զսպել, համբերութիւնից դուրս եկած
նայեց ուղղակի Հ հարատի մաքուր ածիլած կարմիր ե-
րեսին ու բարձրակոչ ասեց:—Տօ՛, դեադա մարդ,
այս էր ձեր խոստում կատարելը: Հիւանդ ժամանակ
բարեկամների ներկայութեամբ խոստացաք մեծ բա-
րեգործութիւն անել. երեկ ձեր հաստ փորը խափա-
նեց այդ սիրուն ուխտն իրագործել: Ասած է՝ աւելի

հեշտ է ուղարին ասեղի ծակով անցկենալը, քան թէ վաստ հարատին արքայութիւն մտնելը։ Այդ պատճառով դուք չկարողացաք արքայութիւն մտնել, այլ մնացիք մախաթի ծակում։ Աշխարհի մէջ բարեգործի անուն ժառանգելու համար ուզում էք կիրակնօրեայ, դպրոց բանալ, դրա համար ոչ շէնք էք շինում, ոչ սեղան, ոչ նստարան։ Ամեն էլ խեղճ գիւղացոց հաշուով պատրաստի են. բացի այդ պահանջում էք, որ դեռ աղքատ ուսուցիչներն էլ դան ծեր փառքի համար ծրի դաս տան, իսկ դուք տարեկան միայն հարիւր ուուրի ծախսելով ողջ գիւղի բարեգործ համարուէք ու լրագիրներում էլ ծեղ դովել տաք։ Հապա՛ չէք ամառում ծեր շարէշար քառայարկ տներից, ծեր միլիոն կարողութիւնից, որ ինքներդ այդպէս փոքրովի էք վարւում ու դիւդի աղքատ ուսուցիչներին ապերախիլ անուանում։ Մանչեստրում տաս, տասսնհինգ տարի նրա համար կացաք, որ դաք այդ տեսակ անբարյական ուտիլիտարիստութիւնն բանեցնէք ծեր շրջապատողների գլխին։

Բժիշկը զայրոյթից գունատուած թողեց X հարբատին ու ճանապարհը շարունակելով յանդիմանեց ինքն իրան.—ախմախ զլուխ, ինչո՞ւ չէիր թողնում, որ այդպէս խոզը գնայ փորահարինքից սատկի։



48431

ԳԻՆՆ Է 8 ԿՈՊԵԿ

Հարցնել Գուտեմբերգի, Կենտրոնական և Փարոս
Դրախտանովմթներում.